Գործ թիվ ԵԴ/5602/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

28.02.2023թ. *ք. Երևան*

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի /այսուհետ՝ Դատարան/ դատավոր Տ.Ստեփանյանս, ուսումնասիրելով <<Քրոու ընդ Ասատրյանս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայցադիմումին և դրան կից ներկայացված փաստաթղթերին,

ՊԱՐԶԵՑԻ

<<Քրոու ընդ Ասատրյանս>> ՍՊԸ-ն հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ Տավուշի մարզպետարանի՝ ՀՀ Տավուշի մարզպետարանի գլխավոր քարտուղարի՝ <<Քրոու ընդ Ասատրյանս>> ՍՊԸ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու մասին 16.01.2023թ թիվ 18 Ա հրամանը/ որոշումը/ անվավեր ճանաչելու պահանջի մասին:

14.02.2023թ. հայցադիմումը հանձնվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Տ. Ստեփանյանին:

Դատարանի 17.02.2023թ. որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

24.02.2023թ. հայցադիմումը կրկին հանձնվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Տ. Ստեփանյանին:

Հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ և նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով նախատեսված՝ հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր չկան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ

<<Քրոու ընդ Ասատրյանս>> ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ Տավուշի մարզպետարանի՝ ՀՀ Տավուշի մարզպետարանի գլխավոր քարտուղարի՝ <<Քրոու ընդ Ասատրյանս>> ՍՊԸ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու մասին 16.01.2023թ թիվ 18 Ա հրամանը/ որոշումը/ անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:

Սույն դիմումը դատարանում ընդունված համարել սկզբնական ներկայացման օրը:

ԴԱՏԱՎՈՐ **Տ. ՍՏԵՓԱՆՅԱՆ**